№ 6. ՓԵՏՐՎԱՐԻ 19 — 1876 — ՓԵՏՐՎԱՐԻ 19. № 6.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 5 ռուբլ. կես տարվանը 3 ռուբլ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատունը և պ. Ծատուրեանի խանութում.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ, Редакція „Мшакъ.“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզվով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառից 2 կոպէկ.

## ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի 1876 թ. նոյն պրոգրամայով և գիրքով

Տարեկան գինը 5 ռուբլ.

Կէս տարվանը 3 „

Բացի խմբագրատանից կարելի է գրվել և պ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ և նոյնպէս պ. ԱՐԱՍԻԱՆԻ խանութում.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի, Тифлисъ, редакція „Мшакъ“

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միթէ աւետարանը վնասակար է։—Ներքին տեսութիւն։ Թուրք ազգաբնակութիւնը Երեւանի նահանգում։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Գալիցիայի հայերը։ Թիւրքիա։ Ֆրանսիա։ Գերմանիա։ Նամակ Փարիզից։—Խառն լուրեր։—Յայտարարութիւններ։—Ֆելիէտօն։

### ՄԻԹԷ ԱՒԵՏԱՐԱՆԸ ՎՆԱՍԱԿԱՐ Է

—

Երբ որ մենք լսում ենք հետևեալ դատողութիւնը՝ թէ աւետարանը հարկաւոր չէ երբէք թարգմանել ժողովրդական, այսինքն ժողովրդին հասկանալի լեզուով, այլ այդ գիրքը միշտ պէտք է տպված լինի ժողովրդին անհասկանալի, մեռած լեզուով,—այն ժամանակ ակամայ ծնվում է մեր գլխում հետևեալ բնական հարց՝ եթէ նրան չը պէտք է թարգմանել հասկանալի լեզուով, կենդանի բարբառով, նշանակում է թէ ժողովուրդը չը պէտք է հասկանայ այդ գիրքը կարդալու ժամանակ, ուրեմն նշանակում է թէ ամբոխի համար աւետարանի հասկանալը՝ վնասակար է։

Այդպէս է դատում երևի մեր հայ-լուսաւորչական եկեղեցու հոգևորականութիւնը, խստութեամբ արգելելով որ Քրիստոսի խօսքը մատչելի լինի հայ ժողովրդին, որ նա թարգմանվի ժողովրդին հասկանալի, աշխարհաբար, խօսեցած, կենդանի, ժողովրդի հասարակական կեանքի ամենօրեայ յարաբերութիւնների մէջ գործածական լեզուով։

Եթէ մեր հոգևորականութիւնը այն կարծիքի է որ աւետարանը վնասակար մի ընթերցանութիւն է ժողովրդի համար,—նա յաջողդաբար և լոգիկական կերպով կը վարվեր, արգելելով աւետարանի և հին հայերէն, գրաբար լեզուով տպագրելը, որովհետև որքան և անհասկանալի լինէր մեր արդեան ամբոխին գրաբար լեզուն, նա դարձեալ աւելի հասկանալի է քան թէ դիցուք մի օտար լեզու...

Ուրեմն մենք խորհուրդ կը տայինք մեր իմաստուն հոգևորականութեանը, եթէ նա կամենում է որ հայ ռամիկ ժողովուրդը մի խօսք չը հասկանայ աւետարանից, արգելել գրաբար (հին հայերէն) լեզուով տպված աւետարանի տպագրված օրինակները և հրամայել այսուհետև որ հայ ամբոխի համար աւետարանը թարգմանվի և ամբոխի մէջ տարածվի օրինակ՝ չէնարէն լեզուով...

Բայց մենք, համարելով աւետարանը, Քրիստոսի խօսքերը, նորա գաղափարները, նորա կեանքի նկարագրութիւնը՝ բարձր, վսեմ, բարոյականացնող, ազնուացնող, զարգացնող, մխիթարող ընթերցանութիւն,—կը կամենայինք տեսնել այդ ատուածային գիրքը իւրաքանչիւր գրագէտ հայի ձեռքում՝ աշխարհաբար, հասկանալի, կենդանի հայերէն լեզուով թարգմանած...

Այդ մաքին երևի համաձայն էր և Բիբլիական (աւետարանական) ընկերութեան բաժինը Թիֆլիսում, երբ դիտաւորութիւն ունեցաւ աշխարհաբար հայերէն լեզուով թարգմանած աւետարանը հրատարակել։

Ընթերցողին արդէն յայտնի է որ Ս. Էջմիածինը այդ չը թոյլատուեց...

Մեզ յայտնի չէ ինչ էր Բիբլիական ընկերութեան նպատակը։ Եթէ նորա նպատակն էր առ հասարակ հայերի մէջ աւետարանը տարածել,—այժմ նա համոզվեցաւ որ հայ լուսաւորչական եկեղեցու գլուխը, Պ. Հրափառ Կաթողիկոսը, վնասակար է համարում հայերի համար աշխարհաբար լեզուով թարգմանած աւետարանը։ Իսկ եթէ ընկերութեան նպատակն էր միայն հայ-բողոքականների մէջ տարածել աշխարհաբար աւետարանը—այն ժամանակ մեզ անհասկանալի է թէ ինչպէս ընկերութիւնը դիմեց Ս. Էջմիածին աւետարանի տպագրութեան թոյլատուութիւնը խնդրելու համար։ Այդ Կաթողիկոսը հայ լուսաւորչական եկեղեցու կաթողիկոս է, բայց նա հայ-բողոքականների եկեղեցու գլուխը չէ։ Կաթողիկոսը հայոց եկեղեցու կաթողիկոս է, բայց ոչ թէ հայոց լեզուի կաթողիկոս է։ Այ-բողոքականները ազգութեամբ հայեր են, լեզուով հայեր են, միայն նրանց կրօնքը այլ է։ Նրանց մայրենի լեզու հայերէն է, նրանց ազգութիւնը՝ հայոց ազգութիւն է։ Բայց որովհետև նրանք ուրիշ կրօնք են դաւանում, ուրեմն իրանց եկեղեցական գրքերի տպագրութեան թոյլատուութիւնը ստանալու համար, նոքա պէտք է դիմեն այն հիմարկութեան, որի իշխանութեանը նոքա իրանց եկեղեցական հարցերի մէջ ենթարկվում են, այսինքն Ս. Պետերբուրգի բողոքական Կոնսիստորիային, որ իրաւունք ունի թոյլատուութիւն տալ տպագրել աւետարանները Ռուսաստանի մէջ զետեղված բողոքականների համար այլ և այլ լեզուներով՝ գերմանական, լիհական, լեթական, շվեդական, ֆինական, ուրեմն և Ռուսահպատակ հայ-բողոքականների եկեղեցական գրքերը նոյն Կոնսիստորիայի քննութեան են ենթարկվում։ Տէրութիւնը մի կողմից ճանաչելով հայերին լուսաւորչական եկեղեցու իշխանութենից դուրս գալու և բողոքականութիւնը ընդունելու իրաւունքը,—միւս կողմից չէ ստիպում հայ-բողոքական համայնքը իր եկեղեցական հարցերի վճռելու վերաբերութեամբ կրկին դիմել այն եկեղեցու իշխանութեանը, որի իրաւասութենից նոքա անկախ են դարձել։

Այդ դիպվածում օրէնքը (յօդ. 40 Յենզրական Կանոնադր.) թոյլ է տալիս բողոքական դաւանութեանը պահանջող հոգևորական գրքերը ներկայացնել բողոքական հոգևոր իշխանութեանը, առանց յիշելու որ լեզուով են գրված այդ գրքերը։

Գ. Ա.

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

#### ԹՈՒՐՔ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

—

Նորերում „Тифл. Вѣстн.“ լրագիրը, իւր 9, 15 և 22 համարներում, մի երկար յօդուած էր նուիրած դատաստանական վերանորոգութեանը Կովկասում։ Այդ յօդվածը առիթ է տալիս ինձ նոյնպէս մէկ երկու խօսք ասել դատաստանական վերանորոգութեան ազդեցութեան վերա մեզանում, Օրդուբաթի մասնում, և ներկայացնել այն ցաւալի վիճակը, որին ենթարկուած են այդտեղի բնակիչները։

Օրդուբաթի մասը (Ордубатскій участокъ), կազմում է Երևանի նահանգի, Նախիջևանի գաւառի մասը *)։ Մինչև դատաստանական վերանորոգութիւնը, այսինքն մինչև 1868 թուականը, դա ինքնուրոյն գաւառ էր առանձին գաւառապետի ներքոյ, իւր մէջ պարունակելով այժմեան Երիսաւէտպոլի նահանգի, Զանգեզուր գաւառի մի մասը. այդ ժամանակից դա մտաւ Նախիջևանի գաւառապետի կառավարութեան տակ, Օրդուբաթի մէջ մնալով միայն մի պրիստաւ, որին վերջին ժամանակումս փոխարինեց գաւառապետի օգնական, և կարգուեց հաշտարար դատաւորի պաշտօնակատար։ Այդ մասի բնակիչը կազմում են հայեր և տաճիկներ, համարեա հաւասարաչափ։

Դա սահմանակից լինելով մի կողմից Պարսկաստանի հետ, որից բաժանվում է Երասխ գետով, և միւս կողմից Ղարաբաղու երկրին, ինչպես 'ի վաղուց սկսեալ կենում են շատ ապաստակիչ տաճիկներ, ակներև յայտնի է որ ազատ չէ մնացած աւազակութիւններից։ Աւազակները հարկաւոր դիպուածում ապաստան գտնելով Պարսկաստանի մէջ, կամ Ղարաբաղի ապահով տեղերքում, համարձակ կատարել են և կատարում են իրենց յափշտակութիւնները։ Այդտեղ յայտնի են շատ այդպիսի աւազակ գեղաց անուններ, որոնք շարունակաբար յաջորդել են միմեանց, ինչպէս են՝ Աղիզօզալ, և Բօռ Ղ. մամալ. այդ վերջինի տեղը բռնում են հեղհեղ իւր որդին Իսմայիլ և նորա եղբայրը Ղ. Աբբաս և ուրիշ շատեր, ինչպէս և նորերում Աշմուրդ, Աղիջաֆար և այլն։ Սակայն մինչև վերանորոգութիւնը, քանի Օրդուբաթի մէջ բոլոր քրէական գործերը ենթարկվում էին գաւառական դատարանի քննութեան, ուրեմն որովհետև մեզանից շատերը ջուրթակի վրա են ածում,—այժմ երբ երևելի Կոնսկի պիտի դայ մեր քաղաքը, կասենք թէ՝ ինչ հարկաւոր է նրան լսել... ջուրթակի վրա ածողներին ամեն օր կարող ենք լսել թատրոնի օրկէստրի մէջ... Կամ որովհետև Թիֆլիսում, մանաւանդ Աղալակի թաղում մի տուն չը կայ որտեղ պիանօ չը լինէր,—ուրեմն ինչ հարկաւոր է ցանկանալ երևելի Ռուբինշտայնին լսել...

*) Դա է հայոց հին Գողթն գաւառը, ունի մօտ 25 գիւղեր, որոնցից գլխաւորն է Ագուլիս, իսկ միակ քաղաքն է Օրդուբաթ. Ծ. Հ.

### ՖԵԼԻԷՏՕՆ

Ամիսը մի անգամ գրվող ֆելիէտօնի նպատակը։—Պատահած երևոյթների տեսութիւնը։—Անցնող ամիսը։—Վիճակախաղը։—Լօտարէյի բարոյական ներգործութիւնը։—Ասիական գործիքի վրա ածող մի խաղացի երաժշտ։—Զարմանալի դատողութիւն։—Ասիական երաժշտական գործիքը և եւրոպական ճարպիկութիւնը։—Ասիական զլուխները և եւրոպական ուսումը։—Ասիական և եւրոպական ուղիղը։—Վիկտոր Հիւգօ և Աւագ Գրիգորեանց։—Մեր անձնազոհութիւնները։—Սեղանում ամեն բան լաւ է։

—

Որովհետև «Մշակի» խմբագրութեան մէջ ես եմ մնացել միայն ֆելիէտօնիստ, այդ պատճառով ես խոստանում եմ այսուհետև ամիսը մի անգամ «Մշակի» մէջ ֆելիէտօններ գրելու։ Կը կարողանամ արդեօք կատարել խոստումս,—տեսնենք։ Եւ արդեօք լաւ կը լինեն իմ ֆելիէտօններս, երբ ստիպված կը լինեմ անպատճառ իւրաքանչիւր ամիս մի մի հատ գրել.... Այնուամենայնիւ յոյս ունեմ որ զանազան գաւառական ֆելիէտօններից վատ չեն լինի...

Ամիսը մի անգամ գրվող ֆելիէտօնի նպատակը ինչ պիտի լինի,—նրա նպատակը պիտի լինի ամսվայ մէջ պատահած կարգից դուրս, աչքի ընկնող, նշանաւոր, ուշադրութեան արժանի երևոյթների տեսութիւնն անել։ Եւ ոչ թէ միայն Թիֆլիսում պատահած երևոյթների, բայց և ամբողջ Կովկասում, կամ եթէ հնարաւոր լինէր՝ առհասարակ Ասիայում... Եւրոպայի հետ ասիացին գործ չունի։

***

Այդ անցնող ամսի մէջ, օրինակ Թիֆլիսում, ինչ է պատահել, ինչի մասին էին խօսում. Խօսում էին որ այս ինչ մարդ մեռել է, այն ինչ մարդ պսակվել է, եղանակը ցուրտ էր, յետոյ տաքացաւ, յետոյ անձրևներ եկան... Փողոցներում կատաղի շուն է յայտնվել, որ ուրիշ մի քանի շներին կծել է, կաթոլիկների թաղում երկու ոսկանված մարդիկ են գտել, մի աղքատացած, հարուստ եղած և իր հարստութիւնը քէֆի և կանանց վրա վատնած պարոն իր տունը ծախել է, բայց ստացած փողից մի կոպէկ նրա գլխանը չէ մտել, այլ բոլորը հին պարաքերը վճարելու վրա է գործ դրվել... Վերջապէս այս օրերս ամենքը զբաղված էին վիճակախաղով։ Ամեն մէկը, որ երկու երեք տոմսակ է վերցրել, կը կամենար կալուածատէր դառնալ։

***

Ես կարծում եմ որ վիճակախաղը (լօտարէյա) մի շատ օգտաւէտ և բարոյականացնող հիմնարկութիւն է։ Իւրաքանչիւր մարդուն յատուկ է դեռ երիտասարդութենից մտածել որ իրան վիճակված է նշանաւոր մարդ լինել, որ իրան վիճակված է առանձին բաղդաւորութիւն կեանքիս մէջ։ Բայց յետոյ կեանքի դառնութիւնը, անաջողութիւնները, ձախորդութիւնները նրան ստիպում են աւելի համեստ լինել, հաշտվել կեանքի ծանր լուծի հետ, աշխատել և միայն իր անձնական աշխատանքից իր համար եթէ ոչ բաղդ, գոնէ հոգեկան հանգստութիւն ստանալ։—Անդէս էլ վիճակախաղի հետ... իւրաքանչիւրը մեզանից, վեր առնելով մի քանի տոմսակներ, կարծում է թէ անպատճառ իրան է վիճակված լօտարէյի ամենաթանկագին առարկան, վիճակախաղի առաջին բաժինը։ Բայց երբ տեսնում է թէ ոչինչ չէ տարել, թէ ծախսած փողերը ի զուր է կորցրել,—այն ժամանակ աւելի զգոյշ է դառնում կեանքիս մէջ, համոզվում է որ ոչինչ չանելով, բաղդից ամեն բան սպասել չէ կարելի, սկսում է միայն իր անձնական ոյժերի վրա, իր աշխատանքի վրա յոյս դնել...

Ահա ուրեմն վիճակախաղի բարոյականացնող ներգործութիւնը։

Սիրելի ընթերցող, քեզ սիրելով, քեզ պատուելով, կեանքիդ մէջ քեզ աջողութիւն ցանկանալով,—մի և նոյն ժամանակ ցանկանում եմ քեզ որ երբէք մի բան չը տանես մի որ ելատարէյի մէջ... միայն բոլոր յոյսդ դնես քո անձնական, սեփական ոյժերի, աշխատանքի մատաղ և ֆիզիկական զօրութեանդ վրա... Հաւատացիր որ այն ժամանակ դու հասարակութեան աւելի օգտաւէտ անդամ կը լինես...

***

Այս ամսվայ նորութիւններից մինը և այդ էր՝ մի խաղացի որ մեր ասիական երաժշտական գործիքների պէս մի գործիքի վրա է ածում, եկել է մեր քաղաքը և կօնցերտ է տուել այդ գործիքի վրա, որ անուանվում է մանդօլինա։ Շատերը որոնք երաժշտութենից այնքան են հասկանում որքան ես չինական լեզուից, ասում էին տաղանդաւոր երաժշտին լսելուց յետոյ՝ «Ի հարկէ նա շատ լաւ է ածում, բայց ափսոս որ այնպիսի գործիքի վրա է ածում, որի նմանը շատ տարածված է մեր ամբոխի մէջ և ամեն տեղ մեզանում, փողոցի ամեն քայլում կարելի է լսել ինչպէս այդ գործիքի վրա ածում են...“

Զարմանալի դատողութիւն։ Ուրեմն որովհետև մեզանից շատերը ջուրթակի վրա են ածում,—այժմ երբ երևելի Կոնսկի պիտի դայ մեր քաղաքը, կասենք թէ՝ ինչ հարկաւոր է նրան լսել... ջուրթակի վրա ածողներին ամեն օր կարող ենք լսել թատրոնի օրկէստրի մէջ... Կամ որովհետև Թիֆլիսում, մանաւանդ Աղալակի թաղում մի տուն չը կայ որտեղ պիանօ չը լինէր,—ուրեմն ինչ հարկաւոր է ցանկանալ երևելի Ռուբինշտայնին լսել...

ռապեսի իշխանութեանը, անկարգութիւն քիչ էր պատահում, իսկ սպանութիւն հազիւ հազ. բայց վերանորոգութենից յետոյ, երբ դաւառապետի տեղը բռնեցին պրիսաւը և հաշտարար դատաւորի պաշտօնակատարը, այնուհետև չարագործութիւնները շատացան։ Ճշմարիտ է առաջին անգամ չարագործները մի փոքր յուսահատեցին, բայց այդ շուտով փարատուեց երբ հազիւ փոքր ինչ ծանօթացին նոր կարգադրութեան և մանաւանդ դատաւորի գործունէութեան, որը և չէ փոխուած այս ութ տարուայ ընթացքում։ Բաւական է նոցա համար իրենց գաղտի ընկերներից վկայութիւն տանալ իրենց բարոյականութեան վերաբերմամբ, բաւական է նոցա վկայութիւնը որ չարագործութիւն կատարուած ժամանակ մեղադրուողը այս ինչ տեղ, այս ինչ անձանց մօտ է եղած, որ յանցաւորը արդարանայ...

Անհերքելի է, որ այդպիսի դիպուածների համար ուրիշ միջոցներ կան յանցանքի նշաններն երևան հանելու, բայց մեզ չը յաջողից տեսնել այդպիսի դիպուած։ Հաւատով կազմուեցին շատ խմբեր աւազակների և այնպէս անուանուած ընտանի գողերի, իւրաքանչիւրն ունենալով Օրդուբաթի մէջ մի գլխաւոր կուսակից, որոնք առ հասարակ լինելով ժողովրդական առաջին դասերից, իրենց ազդեցութիւնը մեծ դժուարութիւն չեն կրում հարկաւոր ժամանակ իրենց կուսակիցների արդարանալու միջոցներ հնարել։ Այնուհետև մտածիր, ընթերցող, խեղճ ժողովրդի և առ հասարակ գիւղականի վիճակը. նա չէ կարող անիրկիւղ մի գիւղից միւսն երթալ, չէ կարող համարձակ իւր այրին գնալ և պահպանել իւր քրտինքով պաղաքաղութեան հասցրած պտուղը, չէ կարող իւր տունը, իւր անձը պաշտպանել աւազակաց յարձակումից։

Երդեհնագործութիւնը իւր վերջին աստիճանին էր հասած անցեալ 1875 թուականին։ Դեռ թողած ընտանի գողերն, այդ տարի կային երկու կատաղի խմբեր խմբապետութեամբ յիշեալ Ալեմուրադի և Բիլջաֆարի (տեղական կառավարութիւնը 1869 թուականից սկսեալ առաջինին բռնել է հետևում, իսկ վերջինը գոնէ ստացաւ 'ի վերջոյ իւր արժանաւոր պատիժը խեղդուելով Երասխի մէջ)։ Դոքա չը բաւականացան արդէն խեղճ ժողովրդից քրտինքով ձեռք բերած հացի կլորը խլելով, նոցա կատաղութեան և զոհ դարձան շատ անձինք։ Ապանութիւն բառը, որ մեր մէջ մեծ սարսափով էր արտաբերվում, այդ տարի սովորական դարձաւ. ժողովուրդը սովորից սակաւ կամ ականատես լինել մի դժբաղդութեան, կամ լսել մի այդպիսի լուր իւր շրջականերից։ Այդ տարուայ մի քանի ամիսների ընթացքում պատահեցան բաւական սպանութիւնք վիրաւորութիւնք և յափշտակութիւնք։ *) Մի գիշեր աւազակները բռնելով մի ձորի մէջ հասարակաց ճանապարհը, կողոպտած էին բոլոր անցուդարձ անողներին, թուով մօտ 40 հոգի։ Մայիս ամսում 14 հոգուով թափվում են Ն. Եղուլիսի մի բնակչի տունը և վիրաւորելով տան պահապանին, խեղճ տանուտիրոջ երկար տարիներով օտարութեան մէջ քրտինքով ձեռք բերած բոլոր հարստութիւնը կողոպտում են մի գիշերուայ մէջ։ Օրկուածները հեռագրով դիմում են Երևանի նահանգական Դատարանի պրոկուրորին, խնդրելով գործունեայ քննիչ, որպէս զի չանհետանայ չարագործութեան հետքը։ Ա ինտեղից քննութիւնը յանձնում են տեղական հաշտարար դատաւորի պաշտօնակատարին։ Երևակայիր ընթերցող խեղճ գիւղացի մը, երբ յիշեալ պաշտօնակատարից քննութեան համար դատարանը հրաւիրուելով այնտեղ, կանցելարիայում տեսնում է իւր կողոպտիչներից երկուսին։ Դոքա Օրդուբաթի երկու երևելի տաճիկ գերդաստաններից են և ծառայում են նոյն պաշտօնակատարի մօտ։ Այդ մասին ծանուցում են տալիս. դոքա կալանաւորվում են և շուտով արձակվում ներկայացնելով գրաւ։ Գիւղացոց անխոնջ հետևողութեամբ շուտով յայտնուեցին չարագործներից մէկ երկու ևս և գտնուեց կողոպուտի մի մասը բաժանուած Խանազա անունով տաճկական գիւղի գրեթէ ամբողջ ժողովրդի տներում։ Ուրիշ անգամ այդպէս խմբով, բայց առաւել գաղտաբար, յարձակվում են Եղա անուամբ հայաբնակ գիւղի վրա, դեռ երեկոյեան, ջահիւով և աղաղակներով։ Միամիտ գիւղացիք ապշած դուրս են գալիս իմանալու այդ զարմանալի հանգամանքը, երեք հոգի զոհ են լինում տաճիկների կատաղութեան և մի քանի հոգի վիրաւորվում, որոց թուում լինում են և տեղւոյն քահանայն և մի կազակ։

Բայց չէ կարելի մի առ մի յիշել ամենայն հանգամանք, որ մի գուցէ ձանձրութիւն պատճառեմ ընթերցողաց։

Ահա այսպիսի վիճակ է կրում խեղճ գիւղացի հայն և այժմ տաճիկներից։ Անցեալն անցած է և որքան ևս դառը լինի, սակայն մոռացուելու է, ժամանակ է մտածելու ապագայի համար, որովհետև եթէ վաղօրօք չը գործադրուին հարկաւոր անօրինութիւնը, գնալով առաւել պիտի թշուառանայ գիւղացիների վիճակը։

Վերջացնում եմ խօսքս, կրկնելով թէ իրաւացի է „Тифл. Вѣстн.“ լրագրի նպատակութիւնը Կովկասեան տաճիկների վերաբերմամբ՝ թէ դոքա դեռ չեն զարգացած 1868 թուականի դատաստանական վերանորոգութեան համար և թէ դոցա համար հարկաւոր են աւելի պարզ, աւելի ազդու, աւելի խիստ, աւելի սկզբնական օրէնքներ...

Գիւղացի

*) Խնդրումեմ ընթերցողաց ներողամտութիւնը որ չեմ կարող որոշ թիւնշանակել, այնու ամենայնիւ այդ քանի ամիսների մէջ կատարուած սպանութեանց թիւը երբէք պակաս չէր եօթից (իւրաքանչիւր ամիս), որ քիչ նշանակութիւն չունի այդպիսի սակաւ բնակիչներով երկրի համար։

Ծ. Հ.

---

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ատարախանից մեզ գրում են որ յունվարի 23-ին այդտեղի քաղաքային թատրոնում եղաւ սիրողների հայերէն ներկայացումն յօգուտ քաղաքիս հայ օրիորդաց ծխական ուսումնարանի։ Խաղացին «Արշակ երկրորդ» ողբերգութիւնը։

***

„Тифл. Вѣстн.“ լրագիրը ստացած էր անցեալ շաբաթ մի հեռագիր Քութայիսից, որ քաղաքիս կենդրոնական մասում փետրվարի 8-ին յայտնվեցաւ հրդեհ։ Շատ խանութներ այրվեցան։ Վաճառականներից շատերը մնացին կատ հացի կարօտ։ Հրդեհից պատճառած վնասը հասնում է մինչև 580,000 ռուբլ։

***

Փետրվարի 11-ին եղաւ Թիֆլիսի երաժշտական ընկերութեան դահլիճում իտալացի երաժիշտ պ. Վիմերկատիի կոնցերտը։ Հանդիսատեսը շատ չը կար դժբաղդաբար, բայց ով որ եկած էր, հիացած մնաց պարոնի ածելուց մանդոլինի վրա։ Իւրաքանչիւր կտորը ածելուց յետոյ, հասարակութեան մէջ յանկարծակի էին լսում ոգևորված և տեղական ծափահարութիւններ։ Բայց տաղանդաւոր երաժիշտը բաղդ չունի։ Մինչև այժմ նա չը կարողացաւ տալ իր կոնցերտը, օգնականներ չը գտնելու պատճառով, իսկ երբ կազմվեցաւ կոնցերտի պրոգրամը, յանկարծ կոնցերտի օրը օրիորդ Օկուլիչ նրան նամակ է գրում որ հիւանդ է։ Կոնցերտին ներկայ չէին ոչ մեր երաժշտական հեղինակութիւնները, բացի պ. Էպշտայնից, ոչ էլ մեր հասարակութեան այն մասը, որ իրան ցոյց է տալիս երաժշտութեան համակրող...

***

Մեզ գրում են Սուրամից որ մի հայ-վաճառական Պետրոս Կարապետեան անունով անցեալ տարի իր ընտանիքով Թիւրքիայից եկել է Կովկաս։ Չհետեղելով Սուրամից վեց վերստ հեռու գտնվող Օսիաւոր գիւղում գցել է նա կտաւատի սերմերը պ. Դմիտր Վիլերովի արտերում։ Աշնանը նա արդէն հաւաքել է կատարեալ հասած կտաւատը և այն ժամանակից սկսած մինչև այսօր բանում են նրա մօտ իւրաքանչիւր օրը քառասունի չափ մշակներ՝ թէ մարդիկ, թէ կանայք։ Այդ բնական քերքը ուղարկվում է արտասահման։

***

Ախալքալաքից մեզ հաղորդում են որ գաւառապետ պ. Չեխովսկին ամեն պատրաստականութեամբ ցանկանում է նպաստել ժողովրդի զարգացմանը և առաջադիմութեանը։ Ցանկալի է որ գիւղական ժողովուրդը ըմբռնէր նրա օգտաւէտ մտքերը և օգուտ քաղէր դոցանից։ Օրինակ գիւղական կեանքի թշուառ դրութիւնը տեսնելով, նա մօտ օրերումս ցանկացաւ գաւառիս մի հասարակութեան մէջ կազմել գիւղական բանկ,— բաց գիւղական ժողովուրդը իրան յատուկ ազնուութեամբ, չը հասկանալով այդ տեսակ հիմնարկութեան էութիւնը, անվստահ կերպով է վերաբերում յիշեալ բանկի իրագործմանը։

***

Ախալքալաքի նոյն թղթակիցը հաղորդում է մեզ և հետևեալը։ Յունվարի 6-ին, այսինքն Քրիստոսի ծննդեան օրը, մի քանի ատրճանաւորներ և քաղաքացիք կազմեցին Սանդխատան օրիորդական ուսումնարանի համար եօլկա, ուր բացի օրիորդներից, հրաւիրված էին և նոցա ուսուցիչները և ուսումնարանիս բարերարները։ Այսպիսի երեւոյթները, ասում է մեր թղթակիցը, մեզ թւում է թէ անհրաժեշտ են ոչ թէ միայն մեր օրիորդների համար, որք ծնողական օջախից դուրս ոչինչ տեսած չունեն, այլ և ընդհանրապէս մեր հասարակութեան համար։ Մի տեղում, ուր չը կայ հասարակական կեանք, չը կայ ընկերակցութիւն, մանաւանդ կանանց մէջ, ուր նոքա միմեանց տեսնում են միայն եկեղեցում կամ բաղնիքներում,— այնպիսի հասարակութեան մէջ մեծ օգուտ են բերում այս տեսակ երեւոյթներ։ Այդ ինչոյքի միտքը պատկանում է պ. գաւառապետ Չեխովսկուն և գաւառական ուսումնարանի տեսուչ պ. Թամամշեանին։

***

Ալէքսանդրապոլից մեզ գրում են որ այս բարեկենդան օրերին արգելված էր քաղաքիս դայֆախաններում և միկիտաններում թղթախաղը։ Միայն կլուբում և հիւրանոցներում էր թոյլ տուած։ Գիշեր և ցերեկ ուսատաքչիք զինուորական պահապանների հետ փողոցներում ման էին գալիս ու վերահասութիւն էին անում։

***

Ալէքսանդրապոլից հաղորդում են մեզ հետևեալ անհաւատալի լուրը՝ տեղիս առաջնորդ սրբազ. Սուքիաս եպիսկոպոսը արգելից այրի մարդկանց կոյս (աղջիկ) աղջիկ առնելը։ Ցանկալի է որ իրան եպիսկոպոսի կողմից մեզ հաղորդվէր այդ մասին, թէ որքան ստոյգ է այդ լուրը...

***

Փետրվարի 9-ին Թիֆլիսի դումայի քուէարկեց Թիֆլիսի որբերի դատարանի անդամներին։ Ընտրվեցան՝ անդամ-գործակատար պ. Ն. Շանշիեվ, նրա կանդիդատ պ. Ա. Օրբելի, իսկ անդամներ՝ պ. պ. Ասլամազով և Բարանասով։ Դարձեալ հետևեալ նստերից մէնի մէջ Դումայի պէտք է ընտրէ երրորդ անդամին։

***

Կիրակի, փետրվարի 15-ին, Թիֆլիսի Թատրոնում տրվեցաւ առաջին անգամ մի նոր օպերա երկու գործողութեամբ, «Ամալիա» անունով, հեղինակութիւն մեր թատրոնական օրկէստրի կառավարչի, պ. Զօկկիի։ Այդ օպերայի մասին ուրիշ անգամ աւելի մանրամասն կը խօսենք։

***

„Церковный Вѣстникъ“ ռուսերէն լրագիրը, խօսելով Գալիցիայի հայերի վրա,—այդ յօդվածը, որ մեզ ուղարկված է Մոսկվայից, մենք տպում ենք «Մշակի» ներկայ համարում,—աւելացնում է՝ «Եթէ հաւատ ընծայենք Անդրկովկասից եկած վերջին համբաւներին, այն կողմերի հայերի մէջն էլ կատարվում է այժմ կրօնական շարժումն և նշմարվում է յայտնի երկպառակութիւն հոգևորականների և աշխարհականների մէջ։ Կովկասեան «Մշակ» լրագիրը իր վերջին համարների մէջ զետեղից մի շարք թղթակցութիւնների Անդրկովկասի այլ և այլ մասերից, որոց մէջ հաղորդվում է թէ հայ հոգևորական իշխանութիւնը իրր թէ կարգադրութիւն է արած վաճառելու բոլոր եկեղեցիներին,— որպէս քաղաքային, նոյնպէս և գիւղական,—մէկ եկեղեցական մատեան, որի գինն է 150 ռուբլ և իբր թէ սկսած է փակել եկեղեցիքը այն ծուխերի մէջ, որք հրաժարվեցան գնել յիշատակեալ մատեանը։»—Ռուսաց թերթը աւելացնում է՝ նոյն լրագիրը հաղորդում է նաև թէ հայ ընտանիքներից շատերը մատուցած են խնդիրք Կովկասեան բարձր իշխանութեան, թոյլ տալ իրանց անցնել հայ գրիգորեան դաւանութենից պրոտեստանտութիւն։— Մեր Մոսկվայի թղթակիցը ուղարկելով մեզ այս նկատողութիւնը, իրանից հետևեալն է աւելացնում՝ „Բերելով յօդվածի վերջին մասն, որ վերաբերում է մեր ներքին ազգային-եկեղեցական գործերին, անտարակոյս այդ յօդվածը ոչ սակաւ պիտի զարմացնէ ընթերցողներին իր զգուշաւոր լեզուով, որովհետև մէջ բերելով ճաշոցների վաճառման պատճառով կատարված տխրալի անցքերը և հայերի ոմանց պրոտեստանտութեան անցնելու իրողութիւնը, ռուս օրագիրը չէ կարող չաւելացնել՝ „եթէ հաւատ ընծայենք“ և երկու անգամ „իբր թէ“ բառերը։ Նշանակում է թէ ռուս եկեղեցական օրագիրը դժուարանում է հաւատալ կատարված իրողութեանց և ունի լիակատար իրաւունք, վասն զի դժուար է հաւատալ դոցա։ Բայց չը հաւատալ անկարելի է։ „Մշակի“ մէջ տպված տեղեկութեանց պատճառով պաշտպան եղած պատուելի անգամ ոչնչով չը հերքեց եղելութիւնը, այլ ընդհակառակն աւելի ևս ապացուցեց, մէջ բերելով այնպիսի անտեղի և անխորհուրդ գաղափարներ, որք ուսումնականների և բանիմաց անձանց ժպիտը և ծիծաղը միայն շարժեցին“։

***

Բայց ես կարծում եմ ընդհակառակն որ շատ հետաքրքիր է լսել ինչպէս պ. Վիմերկատի ածում է ամենադժուար եւրոպական եղանակները,— և այդքան դեղեցիկ, այդքան ներդաշնակ կերպով է ածում,—այն նահապետական գործիքի վրա, որից մեր Եօվանէները միայն տարրական, երեխայական հնչիւններ քաղել են կարողանում... Որովհետև Բուբինչտայն պիանոյի վրա է ածում և դիցուք իմ ութ տարեկան որդիս էլ նոյն գործիքի վրա է ածում,—ուրեմն երբ Բուբինչտայնը Թիֆլիս կը գայ, ես կասեմ՝ ինչ հարկաւոր է նրան լսել, իմ որդիս էլ պիանոյի վրա է ածում, ու ես առանց փող վճարելու ամեն օր լսում եմ նրան։

Նոյն ինչ որ լինում է երաժշտական գործիքների հետ, լինում է և մարդու խելքի հետ։ Իւրաքանչիւրը մեզանից գլուխ ունի, շատ անգամ էլ մեծ գլուխ, այդ իր գլխի մէջ ուղեղն էլ պահած ունի... բայց այդ իր գլխից շատ շատ կարող է դուրս բերել մի քանի փոքր ի շատէ խելօք, իսկ մեծ մասամբ յիմար դատողութիւններ,—իսկ կան մարդիկ, որք նոյն տեսակ գլուխ ունենալով, հասարակութեանը օգտաւէտ են լինում, գրում են, գրականութիւն են հարստացնում, գիտութեան այս կամ այն ճիւղ են մշակում, երեւելի են դառնում, գիւտեր են անում...

Տուեցէք Եօվանէին պ. Վիմերկատիի մանդոլինը, որի վրա այդ երաժիշտը ամենադժուար եւրոպական եղանակներ է ածում,—և Եօվանէն նոյն գործիքի վրա կը կարողանայ շատ շատ «կտոր կտոր ամպ է գալիս» եղանակը ածել...

***

Ես օրինակ հաւատացած եմ որ պ. Աւադ Դրիգորեանցի ուղեղը նոյնքան լաւ է, նոյնքան առողջ է, նոյնքան կանոնաւոր կազմված է, որքան Վիկտոր Հիւգոյի ուղեղը, բայց այդ վերջինը աշխարհահռչակ գրականական արգիւնքներ է ծընում, իսկ պարոն Գրիգորեանցը շատ շատ կարողանում է «Սոխակը» ստեղծել...

Ինչ է պատճառը... պատճառը այն է որ ինչպէս նոյն երաժշտական գործիքի վրա կարելի է վատ և լաւ ածել, այնպէս էլ մարդուն ընտրեանից տուած ուղեղից կարելի է մեծ մտքեր դուրս բերել և նոյնպէս բոլորովին ապարդիւն աշխատանք կատարել...

***

Բաւական է, արդէն զզվեցանք մենք երեխայութենից միշտ և անդադար անձնազոհութիւններ լսել մեր հասարակութեան մէջ։ Եւ ճշմարիտ ում հետ ուզում ես խօսիր Կովկասում՝ „այդ մենք էլ ունենք, մեզանում մինչև անգամ աւելի լաւ է, քան թէ Եւրոպայում...“ և այլ սորա պէս երեխայական դատողութիւններ կը լսես։

Օրինակ խօսում են ինձ հետ եւրոպական երկրագործութեան վրա... Ես, թէև երբէք տեսած չեմ եւրոպական երկրագործական եղանակները, պատասխանում եմ՝ „չէ, մեզանում, Կովկասում աւելի խելացի կերպով գետինը վարում են, քան թէ Եւրոպայում։“

Իսկ գետինը վարելու այդ խելացի եղանակը նրանումն է պարունակվում, որ լծում են մի քանի հատ եզ կամ գոմէշ, և այդպիսով ի զուր լինում է ժամանակի կորուստ, մարդիկների և կենդանիների ոյժերի կորուստ...

Խօսում են ինձ հետ, օրինակ, եւրոպական գիւղագործութեան վրա։ Ես պատասխանում եմ՝ ոչ մի եւրոպական գինի չէ կարող մեր, Կովկասեան, Կախեթի գինու հետ համեմատվել... Մերը բնական է, ալկոհոլ չունի, ոչինչով ներկված չէ...

Իսկ ճշմարիտ յայտնվում է որ մեր, մանաւանդ կարմիր գինիների մէջ, այնպիսի թունաւոր ներկեր կան, որ Եւրոպայում երբէք տեսած չեն, մի և նոյն ժամանակ այդ բնական անուանված գինիները քիմիապէս հետազօտելով, յայտնվում է որ նրանք պարունակում են իրանց մէջ ալկոհոլի այնքան մեծ պրոցենտը, որ եւրոպական ոչ մի գինի չունի։ Այդ է պատճառը որ ոչ մի երկրում այդքան շատ տարածված չեն սրտի հիւանդութիւնները որքան մեզանում, մանաւանդ երեխաների մէջ...

Խօսում են, օրինակի համար, եւրոպական երաժշտութեան մասին։ Ես անպատճառ պէտք է հաւատացնեմ, որ եւրոպացիք կանոնաւոր, կատարեալ երաժշտութեան մասին հակացողութիւն էլ չունեն... Մեր երգեցողութիւնը ու մեր երաժշտութիւնը աւելի կատարեալ է, քան եւրոպական, մեր երաժշտական գործիքները աւելի բաղդրեալ են... Մենք ունենք քառորդ և ութերորդական հնչիւններ,—իսկ եւրոպացիք այդ չունեն...

Իսկ բանից դուրս է գալիս որ մեր քառորդ և ութերորդական հնչիւնները ուրիշ բան չեն, եթէ ոչ ականջները վիրաւորող, սխալ հնչիւններ...

Խօսում են օրինակ եւրոպական ընտանեկան կեանքի և դատարակութեան վրա... Ես չեմ կարող չը յայտնել իմ համոզմունքը որ եւրոպական ընտանեկան կեանքը ոչինչ բան է մեր ընտանեկան կեանքի հետ համեմատելով։ Մերը նահապետական, պատրիարքական, սիրոյ անսահման զգացմունքի վրա հիմնված ընտանեկան կեանք է, որտեղ ամեն բան ենթարկվում է, հպատակում է ծերութեան, փորձառութեան... և օրհնված է այն տունը որտեղ միշտ ծեր մարդ կայ...

Իսկ աւելի մօտիկ ծանօթանալով այդ գոված ընտանեկան կեանքին, բանից դուրս է գալիս որ այդ նահապետականութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ՝ ամենաանմխիթար բարոյական և մտաւոր սարկութիւն մի կողմից, անսահման բռնաւորութիւն և անպայման կամայականութիւն միւս կողմից...

Ասիացի

Յունվարի 22-ին մենք յայտնեցինք որ „Մշակը" ունէր 400 բաժանորդ,—այժմ, մէկ ամսից յետոյ, մեր բաժանորդների թիւը հասաւ 492 թիւին։

***

Մեր քաղաքը հասաւ երեսի երաժիշտ Ջութակ ածող Ապոլինարի Կ օ ն ս կ ի, որ տալու է փետրվարի 22-ին Թիֆլիսի երաժշտական ընկերութեան դահլիճում մի կոնցերտ իր աղջկայ և որդու մասնակցութեամբ։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԳԱԼԻՑԻԱՑԻ ՀԱՅԵՐԸ

—

„Церковный Вѣстникъ" (Եկեղեցական Լամբաւաբեր) անունով Ս. Պետերբուրգում հրատարակվող ռուսերէն օրագրի անցեալ ամի 44 համարում տպագրված „Գալիցիայի Հայեր" (Галицкіе Армяне) վերնագրով յօդվածի թարգմանութիւնը արժանի ենք համարում ներկայացնել մեր ընթերցողներին։

Պաղուց չէ, ասում է օրագիրը, որ վախճանվեցաւ Գալիցիայի հայ արքեպիսկոպոս Գրիգոր Հիմոնովիչ։ Ակզբից ձայն տարածվեցաւ իբր թէ աւստրիական կառավարութիւնը մտադիր չէ դատարկված տեղում նատեցնել նոր արքեպիսկոպոս, աչքի առնելով Գալիցիայի և Բուկովինայի հայերի սակաւութիւնը, իսկ այժմ Լվով քաղաքի լեհական լրագիրներին գրում են թէ կառավարութիւնը ցոյց է տուած իր համաձայնութիւնը զեռեղել հայ արքեպիսկոպոսական աթոռը և թէ Գալիցիայի և Բուկովինայի հայ հոգևորականութիւնը ընտրած է արդէն երեք կանդիդատ (առաջնորդացուք) այդ տեղի համար հայ քահանաներից։ Առաջին կանդիդատը ընտրված է կանոնիկոս հայ կապիտուլի Գրիգոր Ռոմաշկա, որ մինչև այժմ կառավարում էր հայ վիճակը։ Հատատութիւնը երեք կանդիդատներից մինը՝ կախումն ունի Աւստրիայի կայսրից և Հռոմի պապից։ Գալիցիական ռուսական լրագիր „Աւօվօ" (Խօսք) ասում է թէ Գալիցիայի բոլոր հայոց վիճակը ներկայ ժամանակում, հայոց հաւատքը դաւանողների թիւն նայելով, չէ կարող համեմատվել մէկ օրինաւոր ծուխի այլ դաւանութեան Լվով քաղաքի և կարծում է, որ մի քանի տարից յետոյ, ընտրութիւնը նոր արքեպիսկոպոսի պիտի ընկնի շատ շատ՝ երկու քահանաների վրա, որք երևելու են իբր հաղուագիւտ օրինակներ։ Բոլոր հայերի թիւը՝ Գալիցիայում և Բուկովինայում համարվում է այժմ մօտ 4,500 հոգի։ Նոցանից Գալիցիայումն են 2,102 կաթոլիկ հայեր և 121 ուղղափառներ (?)։ Հայ եպիսկոպոսական աթոռը Լվովի մէջ սկսված է Մեծ Կազիմիր թագաւորի օրերից, այն է 1367 թուից, բայց Լվովի հայ եպիսկոպոսը սկզբից կախումն ունէր Մեծ Հայաստանի պատրիարքից, չը նայելով որ հայերից մի քանիս այն ժամանակն էլ ճանաչում էին իրանց վրա պապի գլխաւորութիւնը։ Իսկ 1666 թուին Յան Կազիմիրի թագաւորութեան ժամանակ դադարեցաւ հայոց պատրիարքի ներգործութիւնը, երբ որ Նիկողայոս (Նիկոլ) Թորոսովիչ ատրագից Կամենեց—Պոդոլսկում միութիւն, ուստի հռոմէական եկեղեցու հետ։ Այն ժամանակից հայ եպիսկոպոսները ստացան արքեպիսկոպոսի տիտղոս և Թորոսովիչի յաջորդները սկսեցին ձեռնադրվել այս ասիճանում արդէն ոչ կաթողիկոսից, այլ հռոմէական և ունիատ եպիսկոպոսներից, պապի կոնդակների (բուլլաների) հիման վրա։ Այս հանգամանքը պատճառ եղաւ անկման հայոց եկեղեցու Գալիցիայում, որ սկզբից ունէր այսպէս շատ հետևողներ և եկեղեցիներ։ Արևելեան հայոց եկեղեցական ծէսը սակաւ առ սակաւ փոխվեցաւ լատինականի և հայերը սկսան անցնել դէպի հռոմէական—կաթոլիկական եկեղեցի։ Սկզբից հայոց վիճակին, բացի Գալիցիայից, պատկանում էին և Կամենեց—Պոդոլսկ, Մոգիլով, Լուցկ և այլ քաղաքներ, իսկ այժմ վիճակը կազմում են միայն Գալիցիա և Բուկովինա։ Նոցանից կախումն ունեն և միւս բոլոր հայերը, որք բնակվում են Աւստրիայի սահմաններում և դաւանում են հռոմէական հաւատքը։ Առհասարակ Աւստրո-Ունգարիայի մէջ համարվում է 14,000 հայ, որոնց մէջից 10,000 կաթոլիկ են և 4000 ուղղափառներ (յունադաւաններ?)։ Վերջին ժամանակներս Գալիցիայի հայերից ոմանք աշխատում են թոյլատրութիւն ստանալ՝ մտնել իրանց պատարագի և առհասարակ եկեղեցական օրինակատարութիւնների մէջ լեհական լեզու, հայոց լեզուի տեղ, որին ծանօթ չեն մինչև անգամ նոցա հոգևորականներից շատերը, ուր մնայ աշխարհականներ։ Սպասում էին հանգուցեալ Հիմոնովիչի մահվան, այդ դիտաւորութիւնը իրագործելու համար։ Հետաքրքիր է՝ արդեօք կիրագործէ այդ մտադրութիւնը նոր ընտրված արքեպիսկոպոսը։

---

### ԹԻՒՐՔԻԱ

—

Ռուսաց պաշտօնական „Правительств. Вѣстн." լրագրում տպված է Թիւրքաց արտաքին գործերի մինիստր Բաշիկ-փաշայի շրջաբերականը դէպի Թիւրքիայի դեսպանները օտար պետութիւնների մէջ։ Շրջաբերականը յայտնում է թէ Թիւրքիայի տէրութիւնը ընդունում է առաջարկված վերանորոգութիւնները, բացառութեամբ հինգերորդ յօդվածի։— Փետրվարի 11-ին (23) ստացված հեռագիրը որ տպված է „Тифл. Вѣстн." լրագրում, հաղորդում է որ Թիւրքիան հրովարտակ է հրատարակել, որտեղ խոստանում է ներողութիւն (ամնիստիա) ապստամբներին, եթէ նոքա չորս շաբաթվայ ընթացքում զէնքերը կը թողնեն։ Այնուհետև տէրութիւնը պարտաւորվում է իր հաշուով նորոգել քանդված տները և եկեղեցիները։

### ՖՐԱՆՍԻԱ

—

Հեռագիրը ստացված է Թիֆլիսում անցեալ շաբաթը Փարիզից, փետրվարի 9-ից՝ Մինչև այժմ յայտնի են պատգամաւորների ընտրութիւնների հետևանքները 233 շրջաններում։ Ընտրված են 7 պահպանողականներ, 7 սահմանադրականներ (օրլէանեանները), 36 պահպանողական հանրապետականներ (ձախ կենտրոնի), 8 օրինականներ, 34 բոնապարտեաններ, 101 հանրապետականներ, 12 ծայրայեղ արմատականներ։ Իսկ 48 շրջաններում կրկին պիտի լինի քուէարկութիւնը։ Ներքին գործերի մինիստր Ռիւֆէ չընտրվեցաւ ոչ մի տեղ, նոյնպէս չընտրվեցաւ և հերցոգ Դրկազ։ Փետրվարի 10-ին յայտնի եղաւ 452 շրջանների մէջ ընտրութիւնների հետևանքը։ Ընտրվեցան 53 պահպանողականներ (օրլէանեաններ, օրինականներ և գաղտնի բոնապարտեաններ), 62 հանրապետական—պահպանողականներ (ձախ կենտրոն), 56 բոնապարտեաններ, 171 հանրապետականներ, 16 արմատականներ (անհաշտներ)։ Իսկ 94 շրջաններում կրկին քուէարկութիւն կը լինի։—Մինիստր ներքին գործերի Ռիւֆէ հրաժարական տուեց իր պաշտօնից։ Հանրապետութեան նախագահը ընդունեց Ռիւֆէի հրաժարականը։ Նոր մինիստրութեան կազմելը յանձնված է Դիւֆօրին, որ և նշանակված է փոխ նախագահ մինիստրների խորհրդի։—Ներքին գործերի մինիստրութիւնը առաջարկված է Կազիմիր Պերիէին, իսկ վաճառականութեան մինիստրութիւնը Տիսրէն-դը-Ռօր, Թիէրի առաջվայ մինիստրին։

### ԳԵՐՄԱՆԻԱ

—

Գերմանական լրագրութիւնը իր ուրախութիւնն է յայտնում Ֆրանսիայի վերջին ընտրութիւնների պատճառով, որք գրաւական կարող են լինել հանրապետութեան հաստատվելուն։—Սակսոնիայի և Սիլեզիայի մէջ պատահել են մեծ հիղեղներ։—Էլբա գետի վրա գտնվող Հեմնիցկ քաղաքում, Մագդեբուրգից ոչ հեռու, հիղեղի պատճառով 700 տներից, 600 տներ վնասվել են։

---

### ՆԱՄԱԿ ՓԱՐԻԶԻՑ

—

76, յունվարի 20-ին

Երբ որ ասում ես մերոնց, թէ ամեն տեղ անկարելի է հայերէն լրագիր հրատարակել՝ չեն հաւատում։ Երբ որ ցոյց ես տալիս և փաստերով հաստատում՝ թէ հայ լրագրութիւնը կամ մի ուրիշ հայ հասարակական գործ կարող է զարգանալ և ապրել միայն հայ հասարակութեան մէջ՝ չեն համոզվում, կասկածում են։ Երբ որ խորհուրդ ես տալիս մեր լրագրողներին և ասում ես, թէ լրագրութեան համար պէտք է պատրաստ լինել և այնպէս դուրս գալ գրականական ասպարէզ,—չեն ընդունում, չեն լսում։

Եւ իրաւ ինչ եղան հայ հասարակութենից հեռու, Եւրոպայում հրատարակող լրագիրներն ու ամսագիրները, որոնց տխուր վախճանը կարծեմ ամենքին լաւ յայտնի է։ Մեթէ սոքա ապացոյց չեն ասածիս։ Բայց ինչ անես, որ մերոնք ընդհանրական ճշմարտութեանը այնքան հաւատ չեն ընծայում, թէեւ փարձերը ցոյց տուին և չոշափելի փաստերն էլ մեռած չեն։ Այդ մերոնքը, որք այսօր էլ բաւական թուով կան, նոյն իսկ այն պարբերական հրատարակութիւնների խմբագիրներն ու աշխատակիցներն են իրանց փոքրաթիւ ընթերցողհամակիցներով։

Մի կողմից՝ պատրաստ չը լինելով լրագրութեան համար, հմուտ չը լինելով պարբերական հրատարակութեան գործին և հեռու գտնուելով հայոց կեանքից՝ այն լրագիրները չը գիտէին ինչ գրեն ու ինչ չը գրեն, չը գիտէին ինչով զբաղեցնեն հայ ընթերցողներին։ Այսպիսով փոխադարձ օգնութիւնը լրագրի հասարակութեան կողմից և թերթին ուժ ու կեանք տուող համակրութիւնը բացակայ լինելով՝ պարբերական հրատարակութեան հոգեհանը—անտարբերութիւնը—իր չար գլուխը բարձրացնելով, սպանում էր լրագրին։ Իսկ միւս կողմից, որ աւելի վատթար է, այն հրատարակութիւնները որոշած, հաստատ պրոգրամ և մանաւանդ ուղղութիւն չունենալով, ներկայացնում էին մի բարեկամ-զրականական խառնակութիւն։ Եւ սորա հետ միասին միշտ այն միաքն էին յայտնում, թէ իրանք ազգի դատաբարակութեան և լուսաւորութեան գործին են ծառայում։ Այն ինչ բացայայտ է, որ նոքա ծառայեցին ոչ թէ ազգին, ոչ թէ հասարակութեանը, այլ իրանց փոքրաթիւ ընթերցողների միայն մի մասին, որ գիտէ ամեն բանից օգուտ քաղել և չահուել։

Ի հարկէ այդպիսի կեանք ունեցող պարբերական հրատարակութիւնները չէին կարող և չեն կարող երկար ապրել, այլ բնականաբար շուտով մահուան դուռն էին ընկնում։ Այս էր և այս է անա հայ հասարակութենից հեռու գտնված, մշակած պրոգրամ ու հաստատ ուղղութիւն չունեցող հայ լրագրների, հայ ամսագրների օրհասական ելքը։

Այն աւանդական պարբերական հրատարակութիւններից մէկը մնացել է մինչև հիմայ՝ պարտաւոր լինելով հէնց իր խմբագիր-հրատարակողների հարուստ քսակին և ոչ թէ առատ բաժանորդներին։

Այս հրատարակութիւնը անա երեսուն և չորս տարի կայ ապրում է։ Թէպէտ մշակած պրոգրամ և մինչև անգամ կարելի է ասել պրոգրամ բոլորովին չունի, թէպէտ իր գոյութեան առաջին տարիներից սկսած մինչև այսօր իր էջերը լցնում է խառնիխուռը, աւելի վատ, անօգուտ քան թէ լաւ յօդուածներով, թէպէտ երբեմն իր մէջ պարունակում է հում, չը մաքրած տեղեկութիւններ հայոց պատմութեան և մեր հին կեանքին վերաբերեալ, այնու ամենայնիւ մի որոշ ուղղութիւն ունի, ուղղութիւն, որ հայերիս համար միշտ ու ամեն տեղ եղել է և կը լինի վնասակար։ Այդ է կաթոլիկական ուղղութիւնը, որ դժբաղդաբար մեզ համար մի նոր բան չէ։ Սորանից յետոյ թող դարձեալ կրկնեն չը հասկացողներն ու անհեռատեսները և ասեն թէ կղերականութիւն ասած խօսքը օտար, չը լսած բան է հայերի մէջ, այլ եւրոպական է, եւրոպացիների մէջ միայն պէտք է փնտռել ու գործածել...

Կարծեմ դուք արդէն զուշակեցիք, որ խօսքս երդուեալ կաթոլիկ Մխիթարեան միաբանութիւնների վրա է։ Սոքա սկզբից մինչև հիմայ, մանաւանդ հիմայ կազմել են և կազմում են մի կղերական կուսակցութիւն հայոց ազգի մէջ։ Այո, մանաւանդ հիմայ, որովհետև հռոմէական պապի հրատարակած ու քարոզած անմիտ անսխալականութիւնը ընդունեցին, դաւանում են հոգով, սրտով և աշխատում են ընդունել ու դաւանել տալ հայերին էլ։ Սորանից յետոյ երևակայեցէք, թէ ինչ կը լինի Մխիթարեանների վարմունքը թէ գրականական և թէ հասարակական մի ուրիշ գործունէութեան մէջ։ Սորանից յետոյ պատկերացրէք, թէ ինչ կը լինեն Մխիթարեանների և սոցա հետ պապադաւան ու հրոմէապաշտ հայերի հոգին ու մարմինը իրանց կենսական արտայայտութեամբ։

Բայց ես մոռացայ փոքր ինչ վերևում խօսած, երեսուն և չորս տարի ապրող հրատարակութեան անունը յիշել։ Մեթէ դուք ինքներդ չը գուշակեցիք որ այդ վենետիկ լոյս տեսնող «Բազմավէպն» է, որին չը գիտեմ ով կնքեց «բազմավէպ» յորմար անունով։ Այո, գլխաւորապէս սորա վրա և սորա նմանների վրա էր խօսքս։

«Բազմավէպը» կարծեմ առաջ հրատարակվում էր ամիսը մի անգամ. չը գիտեմ մի քանի տարի կայ, որ երեք ամիսը մի անգամ է դուրս գալիս։ Սա եղել է և է Մխիթարեանների գործիք, օրգան։ Ինչպէս մեր հին՝ նոյնպէս և մեր նոր կեանքի վրա խօսելու, քննութիւն անելու ժամանակ աշխատել է կաթոլիկական հետքեր նշմարել և ուրախանալ։ Ինչպէս հայոց կեանքից դուրս, օտար ազգերի վրա խօսելու ժամանակ կաթոլիկութիւնը պաշտպանել է՝ նոյն է արել և հայերի և Հայաստանի վերաբերութեամբ։ Մի խօսքով շատ անգամ, շատ բաներում սա հանդիսացել է պաշտպան կաթոլիկական փտած սիստեմների։ Փոխանակ ծանօթացնելու իր ընթերցողներին արժանաւոր, նոր ոգով ու կեանքով ապրող մարդկանց հետ՝ սա շատ անգամ ներկայացրել է նոցա առջև եղուիտ-կաթոլիկների կենսագրութիւնը, ուր գովելով խօսել է այն լոյս ատողների վրա։ Այն էլ չը պէտք է մոռանալ, որ «Բազմավէպը» երբեմն երբեմն շարում է ազատամիտ բաներ. բայց սոքա միայն դատարկ խօսքեր են, որոնց բացարձակ հակառակում են հեղինակների վարմունքն ու ուղղութիւնը։ Խօսքերը նշանակութիւն չունեն, եթէ չեն բխում մաքուր ու ազատ սրտից։

Արդէն գիտենք, որ Մխիթարեանները ցանկանում են հայկական եկեղեցին մօտեցնել կաթոլիկութեանը, ուզում են որ հին ժամանակ լուսաւորչական եկեղեցին անպատճառ կախուած լինէր հռոմէական անտանելի եկեղեցուց։ Արդէն գիտենք «Բազմավէպի» խմբագրապետ հայր Ալիշանի այն նշանաւոր խօսքերը, որով օտարական պապին հրաւիրում է նախագահել հայոց դատաստանում ասելով, թէ «կրօնական խնդիրները թողլով ի դատաստան բարձրագոյն կրօնական ատենի, (Հռոմին) որում ենք և կուզենք միշտ ըլլալ հպատակ»։ Այս բոլորը արդէն գիտենք, չը խօսենք սորա մասին։ Գանք «Բազմավէպի» անցեալ 75 տարուայ վերջին, նոր ստացած (մօտ մի շաբաթ կայ ստացայ) տետրակին և վերևում ասածներս աւելի լաւ ապացուցանելու համար քաղենք մի քանի տողեր։ Անա ինչ է ասում Մխիթարեանների օրգանը Արզրումի հիւսիսային կողմերում գտնված Խոտորջուր գաւառի հայերի մասին՝

...«Այս մեր հրաւիրանաց տեղն է Խոտորջուր, „կամ աւելի ուղիղ՝ Խոտորջուր վիճակը»։ Յետոյ նկարագրելով գաւառը պատմական, աշխարհագրական և ուրիշ կողմից, շարունակում է՝... „չատ „աւելի զարմանալի և հետաքրքրական է գիտ„նալը թէ ինչպէս եղած է, որ մինչդեռ բոլոր „շրջակայ գաւառք, կամ բոլորովին տաճկաբնակ „են կամ գոնէ մեծաւ մասամբ տաճկախառն հայ„կաբնակ, այս տեղը միայն զուտ հայկաբնակ և „կաթոլիկ մնացեր է, որով և իրաւամբ ի շրջա„կայից Պ ղ ա տ ի կ Հ ռ օ վ մ կը կոչուի (երանի „մեզ) իբեն այսպիսի միագաւան և միալեզու ըլ„լալուն պատճառաւը"։

Ինչու է զարմանում «Բազմավէպը» խոտորջուրցիների կաթոլիկ դաւանութեամբ, երբ իրան լաւ յայտնի է, որ Մխիթարեանները իրանց արբանեակներին նպաստել են այդպէս անելու, մանաւանդ որ այն գաւառն էլ «իրենց հրաւիրանաց տեղն է»։ Դարձնենք հիմայ ամսագրի թերթերը. անա մեզ «Գերմանիոյ մեծանանձար ուղղափառ (կարդացէք կաթոլիկ) ատուածաբան վարդապետին մը համառօտ վարքն»։ Յետոյ։ Յետոյ ինչ կուզէք էլի ուրիշ բան։ Անա ձեզ Դիւզանու Օրլէան քաղաքի եղուիտ-կաթոլիկ եպիսկոպոսի պատկերը, որ Ֆրանսիայում ամեն փոքր ի չատէ բան հասկացող ճշմարտասէր մարդուն ատելի է իր վարքով ու իր եղուիտ ոգով։ Կարդանք փոքր ինչ՝

„Գաղիոյ արդի եպիսկոպոսաց մէջ դեր. Տիւ„բանլու անտարակոյս ամենէն հռչակաւոր է. իբրև „պերճախօս, մատենագիր, ատուածաբան, ջա„տագով հաւատոյ և գիտութեանց (!?) պատուա„կանագոյն ձիրքեր կը ներկայացնէ իրեն անձին „վրայ... Կը տեսնուի իրեն անզուգական եռանդն „և փոյթն աշխատութեանց մէջ, երբէք վայրկեան „մ՝ալ հանգիստ չառնուր"։ (Երեի երբ եղուիտական միքենայութիւններ է հնարում.)

Այդ այն „հռչակաւոր" եղուիտն է որ յաջողեցրեց Ֆրանսիայի ազգային ժողովում քուէարկել տալ բարձր „ազատ" կրթութեան կաթոլիկական առաջարկութիւնը։ Այդ այն „ջատագովն է գիտութեանց" որին Ազգային Ժողովի առաջադէմ անդամները հէնց ժողովում խայտառակեցին հրապարակաւ գիտութեան և առաջադիմութեան ատելով։ Այդ այն „անզուգական եռանդն" է որ հոգս է տանում այսօր Ֆրանսիայի եղուիտական համալսարաններում անխնայական հրէշի համար թշուառ սարսափներ պատրաստել և այլն։

Բայց ինչ եմ երկարացնում, կարծես այդպիսի սուրբ մարդկանց և հ. հ. Մխիթարեաններին ոչ ոք չէ ճանաչում. սոքա լաւ յայտնի են։ Միայն պատուական „Բազմավէպը" մոռացել է յիշել, որ այդ պապական մեքենայութիւնների համար „երբէք վայրկեան մ՝ալ հանգիստ չառնողը" մի առանձին սենեակ ունի Փարիզի Մուրատեան վարժարանում, ուր „կաշխատի" սատանան գիտէ թէ ինչով։

Վերջացնում եմ նամակս և չեմ ուզում խօսել Մխիթարեանների օրգանում տպած անտեղի, անօգուտ աղօթքների և անկարգ ու չը գիտեմ ինչ առիթով հրատարակած պատկերների վրա. չեմ ուզում խօսել նոյնպէս մի քանի հնագիտական յօդուածների մասին, որոնք թէև տալիս են հում նիւթ, բայց զուրկ են առողջագատ և օրինաւոր

հայացքներից, ինչպես և իրանք յօդուածագիրները։

Մխիթարեանները հայոց ազգի մէջ ներկայացել են մի կաթոլիկ-կղերական կուսակցութիւն և հետևելով լատինական հոգևորականների ուղղութեանը, գրականական ասպարէզում գործել են հին լեզուի և հին կանոնի համար։ Նոքա հայ գրականական պատմութեան մէջ իրանց արժանի տեղը կունենան, բայց և կը յիշվեն հայ քաղաքական պատմութեան մէջ իրանց խարդախ գործերով։

„Ցուք զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ։"

Ցարոյ

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ գրում են Սուրամից «Միխայլովո գիւղից կէս վերստ հեռաւորութեամբ գտնվում է մի փոքրիկ վրաց կիսաւեր եկեղեցի Շենդարա անունով։ Յունվարի վերջին օրերին, երբ սաստիկ ձիւն էր եկած, այդտեղ հետևեալ սարսափելի անցք է պատահել։ Սաստիկ քամու և խոր ձիւնի ժամանակ մի վրացի ճանապարհորդ մարդ գալիս է եղել Սուրամից դէպի Խաչուր (Միխայլովո)։ Սաստիկ հոգնած և իր ոյժերը նուազած տեսնելով, դիմում է նա դէպի ճանապարհի վրա գտնված յիշեալ եկեղեցին որ փոքր ինչ շունչ քաշէ, հանգստանայ և եկեղեցու մէջ մի բոպէ պատսպարվի սաստիկ քամու դէմ։ Յանկարծ գայլերի մի խումբ վրա են վազում և ճանապարհորդը թէև սաստիկ ազատակելով մտնում է եկեղեցի, բայց չը կարողանալով դուռը փակել, դռան եղած սառուցի կամ ձիւնի պատճառով,—գայլերը նոյնպէս մտնում են եկեղեցի... Այդտեղ սկսվում է մի սարսափելի յուսահատված պատերազմ այդ մարդու, գայլերի մի ամբողջ խումբի դէմ... Հետևեալ օրը մի քանի ուխտաւորներ գտնում են եկեղեցում ողորմելու այլանդակ մարմինը։ Մարմնից, թէ երեսի գծագրութենից անծանոթին էր ճանաչել ով էր այն մարդը, որից մնացել էր մի այլանդակ, գազաններից կերած մի մարմին...» Նամակագիրը աւելացնում է որ եթէ օրստրդներ լինէին այս կողմերը, մեծ օգուտ կը բերէին։ Սուրամումն էլ ամեն գիշեր գայլերի խումբերը չրջում են տների մէջտեղ և ուտում են ընտանի կենդանիներ։

***

Կ. Պոլսում հրատարակվող թուրքերէն «Մանզումէի Էֆքիար» լրագրում, յունվարի 10 (22) համարի մէջ հրատարակվեցաւ ամբողջութեամբ դոկտոր Գրիգոր Արծրունու հայերէն դասախօսութիւնը միօրական ժողովրդագրութեան վրա, որ կարդացվեցաւ Թիֆլիսի գիմնազիայի դահլիճում։ Բացի սորանից լրագրի մի և նոյն համարում խմբագրութեան կողմից թուրքերէն մի յօդված է տպված որ բացատրում է իր ընթերցողներին թէ որքան նշանակութիւն ունեն մի բարեկարգ երկրի և քաղաքակրթված պետութեան համար վիճակագրական հաշուումներ։ Մի և նոյն ժամանակ յօդվածը յիշում է թէ Թիֆլիսի դասախօսը (Գրիգոր Արծրունի) Գերմանիայի համալսարաններում պարապել է մասնագիտական կերպով Ստատիստիկայով և աւելացնում է՝ եթէ ճշմարտութիւնը խոստովանենք, պէտք է ասենք որ մեզանում (Թիւրքիայում) չի գտնվի մի մարդ, որ այդ տեսակ դասախօսութիւն կարողանար հեղինակել և հրապարակապէս կարդալ։ Յօդվածի վերջում խմբագրութիւնը իր ցանկութիւնն է յայտնում որ մի անգամ այդ տեսակ ստատիստիկական ժողովրդագրութիւն կատարվէր և Կ. Պոլսում։

***

Մեզ պատմում են որ «Մշակի» № 4 մէջ տպված աւետարանի մասին նկատողութեան պատճառով, Թիֆլիսի հայ եկեղեցիներից մէնի մէջ մի քահանայ շատ վրդովված քարոզ է ասել ժողովրդին։ Ինչ... աշխարհաբար լեզուով են կամենում այդ երիտասարդները որ թարգմանվի Քրիստոսի աւետարանը, աղաղակում էր տէր-հայրը, մինէ աշխարհաբար լեզու կայ։ Այդ մարդիկը օտար երկիրներ են գնացել, այնտեղից մի խառն, արվեստական լեզու են յետ բերել, որ ոչ ոք չէ հասկանում,.. և այլն։ Միայն զարմանալին այն է, որ մեր հակառակորդ քարոզիչը չէ նկատել որ ժողովրդի հետ խօսելու և մեր մտքերի վերատարութիւնը նրան բացատրելու ժամանակ, նա ինքն էլ խօսում էր աշխարհաբար լեզուով, և ոչ թէ գրաբար լեզուով... Տէր-հայր ինչ էր ձեր նը-պատակը որ քարոզ խօսելու ժամանակ աշխարհաբար էք խօսում,—երևի նպատակը այն է որ ժողովուրդը ձեզ հասկանայ... Ճշմարիտ է այդ զարմանալի ինքնահաւանութիւն է ձեր կողմից՝ կամենում էք որ ժողովուրդը անպատճառ հասկանայ ձեր քարոզները և չը հասկանայ աւետարանը։

***

Մեզ հաղորդում են հետևեալ լուրը՝ Ս. Պետերբուրգում դիտաւորութիւն կայ մի պարբերական թերթ հրատարակել հայերէն լեզուով «Լումայ» անունով, խմբագրութեամբ Փիլիպոս Վարդանեանի և գործակցութեամբ Սա. Նազարեանցի, Կար. Եղեանի և Քեր. Պատկանեանի։ Հրատարակողն է Մ. Սանասարեանը։—Ինչ տեսակ ուղղութիւն կունենայ յիշեալ թերթը,—դեռ ևս դժուար է ասել... Մասնակցողների անուններից մի քանիսների վրա նայելով,—պէտք է կարծել թէ գիտական ուղղութիւն կունենայ, իսկ միւսների վրա նայելով,—հաւանական է դուշակել թէ հրատարակութիւնը կդերական (սև) ուղղութիւն կը ստանայ... Ցեսնենք։ Մի և նոյն ժամանակ խորհուրդ ենք տալիս գիտական պարոններին ուշադրութեամբ կարդալ «Մշակի» ներկայ համարում տպված պ. Ցարոյի նամակը, որտեղ մեր թղթակիցը շատ ուղիղ միտք է յայտնում թէ հայոց լրագիր կամ օրագիր մի հեռու երկրից հրատարակել ոչինչ նշանակութիւն չունի։ Հայոց ազգարնակութեան գլխաւոր մասի, նրա մասնաւոր, բարոյական, գրականա-նիւթական օգուտների համար նրա կենդանի նոր լեզուի զարգացման համար, նրա կեանքի օրական կարևոր հարցեր վճռելու համար այդ տեսակ հրատարակութիւնը ոչ այլ ինչ կը լինի եթէ ոչ մի դիակ, մի անշունչ, մեռած երևոյթ... Բայց գուցէ այլապէս չէր կարող լինել՝ թող մեռած ձևի մէջ ամփոփված, հեռու հայոց կենդանի տարրից, հեռու կեանքից՝ պաշտպանվեն հնացած, մեռած, անշունչ գաղափարներ,—և այն էլ մեռած, անշունչ, արվեստական, հնարած, ժողովրդից չը ըղված, ժողովրդին անհասկանալի լեզուով...

***



Հազարներ անձինքներից երկու տեսի իրանց գեղեցիկ մազերով պարտական են միայն արտասահմանում վաճառվող այնպէս անուանված ԲՈՒՍԱԿԱՆ ԽԻՆՕԳԼԻՑԵՐԻՆԻ ՊՕՄԱԴԱՑԻՆ, որ մազերը բուսնել է տալիս։ Այդ պօմադը բժշկական շատ հեղինակութիւններից փորձված է և ունի վիայական թղթեր պ. Կլեչինսկուց որ Վիէննայի Լանդգերիխտի քիմիայի պրոֆէսոր է և նոյնպէս Մոսկվայի բժշկական վարչութեան թոյլատրութիւն։ Նա ունէր մեծ աջողութիւն և վերջին ժամանակ հետազօտած էր Մոսկվայի բժշկական վարչութենից որ տուեց նրան իր հաւանութիւնը։ Կանոնաւոր գործածութեան ժամանակ, մինչև անգամ մազերից մերկ գլուխները ծածկվում են մազերով։ Այդ պօմադը պնդացնում է կաշին, պահպանում է մազերը թափվելուց, մազերին տալիս է բնական տեսք և փայլունութիւն և իր անուշահոտութեան պատճառով, որ նրա լաւ յատկութիւններից մէնն է, կարող է զարդարել ամենաչքեղ տուալէտի սեղանը։ Այդ բոլոր յատկութիւնները իմ արդիւնքի, իրաւունք են տալիս ինձ յուսալ Ռուսաստանումն էլ նրա ընդարձակ տարածման և պատեալի հասարակութենից լաւ ընդունելութեան վրա։

ԳԻՆԸ ՄԻ ՇԻՇԻ ՀԱՄԱՐ 2 ՌՈՒԲԼԻ

Իւրաքանչիւր շիշի հետ տրվում է և պօմադի գործածութեան նկարագրութիւնը։

ՊՕՄԱԴ

„PASTA EUGENIE"

Այդ պօմադի հնարող տիկինը որ յայտնվեցաւ „Pasta" անունով, պատիւ ունի յայտնել յարգոյ հասարակութեան որ „Pasta Eugénie" այժմ ստացված է և ծախվում է Թիֆլիսում պ. ԼԱՆԿՕԻ մուզիկային մագազինում, Արծրունու տանը, Վլադիկավկասում պ. ՍԵԳԱԼԻ մօտ, իսկ Ստավրապօլում պ. ԿՈՒՐԻԼՋԷՆԿՕԻ մօտ, որտեղ ծախվում են և մնացած այստեղ յիշված արդիւնքները։ Այդ պօմադը նշանաւոր է նորանով, որ նրա գործածութեան կարճ ժամանակից յետոյ երեսը խոտակվում է զանազան բիծերից, անմաքրութիւններից և խոցերից և ստանում է երիտասարդական հասակին յատուկ թարմութիւնը և գեղեցկութիւնը։ Առաջարկվում է այն անձանց որք կամենում են խոտակ և սպիտակ երեսի գոյնը ստանալ։ Հնարողը երաշխաւոր է պօմադի ներգործութեան հաստատութեան համար։ Գրաւական կարող են լինել առողջները համար և այն վկայութիւնները որք ստացված են թէ Վիէննայի քիմիքոս պրոֆէսոր պ. Կլեչինսկուց, թէ Մոսկվայի բժշկական վարչութեան թոյլատրութիւնը։

ՄԻ ՍՐՈՒԱԿԻ ԳԻՆԸ 1 Ր. 60 Կ.

Որի հետ տրվում է և նրա գործածութեան նկարագրութիւնը։

Իւրաքանչիւր սրուակի վրա ինչպէս մազերի համար, այնպէս „Pasta" գտնվում է մի առանձին դրօշմ «Ամուրի» պատկերով և հնարողի ստորագրութեամբ որի վրա առնողներին խնդրում ենք ուշադրութիւն դարձնել։

Bertha Ries

Յ. Գ. „Pasta" պօմադը առաջարկվում է և նոցա, որք թէև չունեն զանազան վերև յիշված կաշու հիւանդութիւններ, բայց կամենում են ունենալ խոտակ և թարմ երեսի, վզի և ձեռքերի գոյնը։

ՁԵՌՔԵՐԻ ՊՕՄԱԴԸ

Այդ պօմադը այնպէս է պատրաստված, որ նրա գործածութենից յետոյ ձեռքերը ստանում են զարմանալի փափկութիւն և սպիտակութիւն։

Սրուակի գինը 1 ր. 30 կոպ.։

ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԸ, թէ մոդ խարտեաշ, թէ սև, որ ներկում է 10 բոպէի միջոցում և չէ կորցնում իր տեսողութիւնը 6 շաբաթվայ ընթացքում։ Արկղիկը 3 բուբլ։

ՏՕԿԱՑԵԱՆ ԲԱԼԶԱՄ, հաստատ միջոց կոշտերի և կաչու կոշտութիւնների դէմ։ Սրուակը 60 կ.։

5 (50)

ԱՄԻՆԵՂԱՏՍԱՏ ՄԻՋՈՑ

ՓՈՔՐ ԵՒ ՄԵԾ ՄԿՆԵՐ, ԽԼՈՒՐԴՆԵՐ ԵՒ ՄԻԶԱՏՆԵՐ ՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ։
ՐԻՍ ԳՈՒՏՄԱՆ ՔԻՄԻՔՈՍ ՊԵՇՏԻՑ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՏԱՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ

Որ մի քանի արտասահմանեան պալատներից արտօնութիւններ ունի։

Պատիւ ունեմ առաջարկել թէ հասակութեանը, թէ պ. պ. վաճառականներին ինձանից հնարած ամենանոր և մեծ ներգործութիւն ունեցող միջոցներ՝ մկներ, խլուրդներ և ամեն տեսակ միջատներ, ինչպէս օրինակ ոև ուտիճ (տարական) ցեց, մրջիւն, բաղլինջ, լու և այլն, ոչնչացնելու համար։ Յիշեալ միջոցները, որք իմ գիտերն են և ինձանից պատրաստված են, ստացան կատարեալ հաւանութիւն և յայտնի են ամբողջ Եւրոպայում, որի համար և ունեմ վկայագիրներ։

Այդ միջոցները արժանացան Մոսկվայի բազմարվեստեան հանդիսում 1872 թ. մեծ արծաթեայ մեդալի և Վիէննայի աշխարհանդիսում 1873 թ. առաջադիմութեան համար մեդալի (Fortschritts—Medaille).



ՀՆԱՐՈՂԸ ԵՐԱՇԽԱՒՈՐ Է ՄԻԶՈՑՆԵՐԻ ՀԱՍՏԱՏ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ։

Մեծ քանակութեամբ առնողներին զիջումն կը լինի։

ԳՆԵՐԸ՝

Մկների և խլուրդների դէմ գեղը մի սրուակի համար 1 ր. 50 կոպ.։ Փոշին սև ուտիճների, ցեցի մրջիւնների և լուերի դէմ 1 բուբլ։ Սորա հետ հարկաւոր է առնել և զուտապէրչի փոքրիկ մեքենաներ իւրաքանչիւրը 60 կոպ.։

Հեղուկ բաղլինջների դէմ մի սրուակ 1 ր.։

Այդ միջոցը ունի անուշ հոտ, բիծեր չէ անում և յանկարծակի է ներգործում, որի համար երաշխաւոր է գլխաւոր դէպօ։

Հատատ միջոց ԿՈՇՏԵՐԻ և կաչու կոշտութիւնների դէմ, մի սրուակ 60 կոպ.։

Գլխաւոր դէպօ ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. ԼԱՆԿՕԻ մուզիկային մագազինում, Դվորցովի փողոցում, Արծրունու տանը։ ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍՈՒՄ պ. ՍԵԳԱԼԻ մօտ, իսկ ՍՏԱՎՐԱՊՕԼՈՒՄ պ. ԿՈՒՐԻԼՋԷՆԿՕԻ մօտ։

Օտարաքաղաքացիները թող բարեհաճեն ճանապարհի ծախսը վճարել յիշեալ միջոցները ուղարկելու համար։ Կարող են թէ փողով, թէ փոստի մարկաներով։

5 (50)


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ


ԻՆՏԵՆԴԱՆՏՍՏՎՕՅԻ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՇՈՐԵՐ ԿԱՐԵԼՈՒ ԳՈՐԾԱՆՈՅԸ Նաթալուզի վրա, առաջարկում է, ինչպէս տղամարդիկներին, այնպէս էլ կանանց մշտական աշխատանք ունենալ ցանկացողներին, հետևեալ պայմանով՝ կարել գործանոցում ամեն տեսակ արքունի շորեր, ամեն մի հատի համար առանձին վարձով։

2 (10)

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ կամենում է պարապել դասաւանութեամբ կլասիկական պրոգիմնազիայի առարկաներից և ընդունում է պանսիոնէրներ տան մէջ։

Հարցնել «Մշակի» խմբագրութեան մէջ, կամ Աբովեանցի մագազինում, Կուկիի կամուրջի վերա։

3 (3)

ԵՒՐՕՊԱԿԱՆ ՆՕՏԱՅՈՎ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ դասեր սկսելու եմ տ. Կարինիցկու մուզիկային մագազինում (Կուկիա, տան № 53, Միքայէլեան փողոց) փետրվար ամսի սկզբին։ Ցանկացողները թող չսպասեն ատորագրվել և պայմաններն իմանալ՝ 1) նոյն մագազինում 2) պ. Ա. Էնֆէնճեանի գրատանը. 3) Պ. Ա. Շահազիզեանի երաժշտական վաճառանոցում, 4) Վարդանեան և ընկ. գրատանը։

2 (3) Յովհաննէս ՍՈՒՋԱՆԱՃԵԱՆ

ՄԻ ՕՐԻՈՐԴ, որ պարապել է տարիներով հայոց լեզուի ուսուցչութեամբ և երկար ժամանակ վարժուհի է եղել մի քանի օրիորդական հայոց դպրոցներում, ցանկանում է ուսուցչուհու և վարժուհու տեղ, կամ Թիֆլիսում, կամ գաւառական մի քաղաքում։ Հասցէն կարելի է իմանալ «ՄՇԱԿԻ» խմբագրութեան մէջ։

1 (5)

Մամուլի տակից դուրս եկաւ

«ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Բ. ՀԱՏՈՐԸ,

որը բաղկացած է 251 նոր և դեռ մամուլի տակ չը մտած բացատրութեամբ 1—10) բանաստեղծութիւններից, Ազգային, Տեղական, Ժողովրդական և հոգևոր երգերից, որոնց մէջ փայլում են նաև Զարկարի (Աբրահամ Մարտիրոսեանի) անուշ մաքի ծնունդից շատերը և վաճառվում է. Տփխիսում՝ պ. պ. Ս. Վարդանեանցի և Աւետիք Էնֆիաճեանցի գրավաճառանոցներում. Գանձակ՝ պ. Ն. Տէր-Ներսիսեանցի մագազինում, իսկ Բագու՝ Մարդասիրական Ընկերութեան Գրադարանում։ Իւրաքանչիւր օրինակի գինն է, ինչպէս և Ա. հատորինը, փոստայի ծախքով 1 բուբլի։

Օտարաքաղաքացի ցանկացողները թող բարեհաճեն դիմել, յայտնելով իրանց հասցէները, կամ յիշեալ տեղերը կամ թէ «ՍՈԽԱԿԻ» Հրատարակիչը ի Բագու՝ այս հասցէով. Въ Баку Аваку Лазаревичу Григорьеву, въ Армянскомъ Училищѣ


Дозволено цензурою 18 Февраля 1876 г. Тифлисъ Типографія Меликова Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ